

Կանոնագրության

ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԼԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԿՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ԹԻՐ 10



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆՐԱԳԻՏ ՀԱՆՐԱԿԻԺԱԳՈՒՄ HANRAKIDAGUE
ՀԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱԿԻԺԱԳՈՒՄ JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 10 || 10 ՄԱՐՏ 1903

ՇԻՐԻՄԱՆ

Մարմարէն ցուրտ՝ մահու սարսուռն ունի ան ,
Ափ մը սեւ հող կազմէ անոր լոկ ծաւալ ,
Մարմիններու վերջին հանգիստ օթեւան՝
Երբ մարդկային հիւժող կեանքը չնչեր ա՛լ :

Ափ մը սեւ հող կազմէ անոր լոկ ծաւալ ,
Այդ հողին տէ՛րն է մարդ վերջի վայրկեանին ,
Երբ մարդկային հիւժող կեանքը չնչեր ա՛լ ,
Ու կը ժպտի մահու ստուերն դառնագին :

Այդ հողին տէ՛րն է մարդ վերջի վայրկեանին .
Անէացման՝ շիրիմն է վի՛հ ցուրտ ու սառ .
Երբ կը ժպտի մահու ստուերն դառնագին՝
Հոն կը լռեն հոգւոյ թելերն ու քնար :

Անէացման շիրիմն է վի՛հ ցուրտ ու սառ ,
Մարմիններու վերջին հանգիստ օթեւան
Հոն կը լռեն հոգւոյն թելերն ու քնար ,
Մարմարէն ցուրտ՝ մահու սարսուռն ունի ան :

ԱՇՈՏ ՊԱԶՊԱԶԵԱՆ



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԶԱՆԱԶԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ՄԷՁ

Յուճաց մեջ. — Հարկաւ հարեւանցի ստուերագծով մը պիտի չլինամ՝ պատկերել ամբողջովին՝ դարերու հապուածին զաւկին, Յոյն մտքին գործընթացքը կրթական առպարէզին մէջ. սակայն աղօտ գաղափար մը կը յուսամ տալ: Յոյնը իմացականութեան մեծ վարպետներ ունեցաւ, անմահ մինչեւ այսօր, որոնք գերեզմանէն վերջ իսկ սերունդներ կը կրթեն ու կը ներշնչեն: Յոյները իրենց մանուկները բացօդեայ վայրերու, փողոցներու եւ հրապարակներու մէջ կը կրթէին և կը հրահանգէին. թերեւս Հնդիկ քուրմերու կրթավայրերէն սա տարբերութեամբ միայն՝ որ այս վերջինները մինչ քաղաքներէ դուրս դաշտերու մէջ կը տօնախմբուէին, անոնք աւելի կը նախընտրէին խառնամբօս երթեւեկումներու քովը, ուր կարելի է չափահասներն ալ իրենց անցուդարձին մէջ բան մը տեսնէին. լսէին ու սորվէին:

Մանուկը իր եօթներորդ տարիքը լրացնելուն կը յանձնուէր գերիի մը որ կը պտտցնէր, կը մարզէր, կը սորվեցնէր և յաջորդաբար տղան մեծնալով ու զարգանալով կը յաճախէր գրականութեան, մարմնամարզութեան և երաժշտութեան: Հոմերոսը՝ տղայոց ընթերցանութեան հանրածանօթ դասագիրքն էր: Բարձրագոյն կարգերու կ'աւանդուէր ճարտարախօսութիւն և փիլիսոփայութիւն: Իւրաքանչիւր դպրոցի պէտ՝ մեծ կամ փոքր աստիճանով շեշտը տարբեր կէտերու կը զարնէր, սակայն կը պնդէր թէ տղայք պարտին երեք բան ուսանիլ. ընթերցում, լոյզ և արհեստ: Սոկրատ՝ այս կենսական խնդրոյն մէջ մեթոտ մը թողուց որուն օգտակարութիւնն ու հոգեբանութիւնը տասնեւիններորդ դարու էն մեծ մանկավարժական իմաստասէրներու հաւանութեան արժանացած, այսօր ընդհանուր քաղաքակիրթ աշխարհի մէջ միակ միջոցը կը նկատուի մանուկը և մարդը դաստիարակելու: Հարցականութիւն՝ ահա գանկի բանալին: Սոկրատ երբեք չէր ըսեր, չէր սորվեցնէր, չէր լեցնէր. կծիկի մը ծայրէն բռնելով քաշելու պէս խնդրոյն մէկ ծայրէն կ'սկսէր հարցնել, հարցնել, մինչեւ որ աշակերտը իր տուած պատասխաններուն մէջ գտնէր փնտռած ճշմարտութիւնը: Սա՝ իր աշակերտին, Պլատոնի նման, սահմաններ, դասաշրջաններ և կանոններ չէր դնէր. միակ կտակը «հարցուցէ՛ք, հարցուցէ՛ք և դարձեալ հարցուցէ՛ք» էր:

Պղատոն, աւելի դուրսեւանական վարպետ մը, կ'ուզէր որ տղայք երեք դասի բաժնէ. արհեստաւոր, մարտիկ և քաղաքական պաշտօնեայ։ Առաջին դասը որ և է արհեստ մը սորվելով իր եւ ժողովուրդին պէտքերը հոգալու կոչում ունէր. իրեն համար նախնական ընթերցանութենէ վերջ մարմնոյն դեռ ճկուն վիճակին մէջ մուրճին, ասեղին, ուրագին և ուրիշ գործիքներու հետ, ձեռքի յարմարացումը կը պահանջէր։ Մարտիկները՝ կ'ստիպէր երաժշտութեամբ և մարմնամարզութեամբ զբաղիլ. շեշտը յաւէտ առաջնոյն վրայ դնելով, սա գաղափարէն դրդեալ թէ հոգիին վերացումներն ու օրօրումները՝ ձայնին հոգեխօսիկ ելեւէջներուն հետ մարմինին պակասները լրացնելով զայն կը կատարեւագործեն։ Երրորդ դասը փիլիսոփայութիւն ուսանելու է որ օրէնքի, հոգիի և ընկերութեան խորերը թափանցելու կարող զարգուն մտքով մը քաղաքական պաշտօնները օգտակարապէս և իրապէս վարէ և չէ թէ Հնդկի իմաստասէրներու պէս սոսկ քրմական ոլորտին մէջ կղզիացած բնազանցական մտալէկումներով ժամանակը մեռցնէ։ Կը թելադրէր որ պատանիներու ձեռք կրօնական մատենաները ընտրողաբար յանձնուին։ Տհաս մտքին առջեւ թափուած բարձրագոյն ճշմարտութիւններ բարերար ազդեցութիւն չեն ըներ, անոր կը փնասեն իր ապագայ ըմբռնումներուն և հաւատքներուն մէջ։ Գաղափարապաշտ այս մեծ խորհողը՝ կրօնի հանդէպ ճշմարիտ տեսութեամբ մը, կը քարոզէր թէ մարդիկ իրենց մատղաշ տարիքէն սկսեալ սորվելու են Աստուած առաքինի և ուղիղ կեանքով փառաւորել, և չէ թէ արարողութիւններով և ունայն ծէսերով։ Կ'ըսէր թէ «Լաւ դաստիարակութիւնը՝ հոգիին և մարմինին այն գեղեցկութիւնները և կատարելութիւնները կուտայ որոնց ընդունակ են»։ Կ'արգիլէր որ մանուկներու բաղձանքները չգոհացնեն, որովհետեւ զանոնք շփացնելու է'ն ազդեցիկ միջոցը կը համարէր։ Դաստիարակութիւնը առաքինութեան կը փոխուի երբ հոգիին մէջ արթնցած հրճուանքի կամ ցաւի, ատելութեան կամ ուրիշ զգացումները օրինաց և կարգի համաձայնին, կ'ըսէր։

Արիստոտէլ տարբեր տեսակէտի վրայ կեցած, վարժապետներէն կը պահանջէր նախ տղուն մարմինը զարգացնել, ապա զգայական կարողութիւնները հրահանգել եւ յետոյ իմացականութիւնը հրահրել։ Երաժշտութեան ազդեցութեանը մեծ գաղափար ունէր. մարդը առաքինութեան կ'առաջնորդէ, կ'ըսէր։ Արարութիւնը շատ աւելի ներշնչիչ կը գտնէր քան արշալոյսի լուսաբեր կամ վերջալոյսի լուսասփիւռ արեգակը։ Ահա ասոնց և ասոնց նման մեծ դաստիարակներու ներշնչումին տակ յունական դպրոցները կազմուեցան։ Եթէ ամփոփ հայեացք մը ձգենք, պի-

տի գտնենք թէ կրթութիւնը իր բոլոր ճիւղերովը մատչելի չէր բոլոր մարդոց: Զայն բնորոշող հանգամանքը՝ մտքի, հոգիի եւ մարմինի համաչափ զարգացումի ձգտումն էր, դաստիարակներ յաւէտ օգտակար գիտութիւններ աւանդելէ աւելի մշակումով եւ գործնականութենէ աւելի մտաշոկումներով իրենց ժամեր կը սպառէին:

Մարմնամարզը որ այնքան չեղտ ընդունած էր, միայն գինւորականութեան համար չէր, այլ մտաւոր եւ հոգեւոր յառաջդիմութեան իբր միջոց կ'ըմբռնուէր: Գիտութիւնը մարդս բարոյապէս բարձրացնելու սանդուխը կ'ընդունուէր: Դաստիարակին հասունցած պտուղը՝ սրտի եւ մտքի միացեալ իմաստութիւնն էր որ ուղիղ գործելու խարիսխը կը կազմէր. իմաստութիւն մը՝ որու սերմերը ամէն անհատի մէջ կար, պորս հարցական ու տրամաբանական մեթոտով դուրս քաշելու էր: Ուսուցիչը կ'աշխատէր ուսանողի խելապատակին մէջ կաղակուրտով խորհուրդները առաջնորդել եւ դուրս հանել: Իմացական կրթութեան մէջ կարեւորութեան շարքը կը կազմէին տրամաբանութիւն, երեւակայութիւն եւ յիշողութիւն: Հոգեբանական սա ուղիղ քայլերը որք քսանեւհինգ դարեր առաջ աւելուած են՝ Յունական թերակղզիին վրայ, այսօր մեր դպրոցներուն մէջ ինչպէս կը յառաջանան, Աստուած գիտէ: Գեղագիտութիւնը սոսկ նպատակ չէր կազմեր այլ նաեւ միջոց՝ մարդուն բարոյական եւ կրօնական մշակումին: Մանկավարժութիւնը՝ իբր գիտութիւն խարսխուած էր հոգեբանութեան եւ բարոյագիտութեան վրայ:

Մ. Ս. ՈՐԲԵՐԵԱՆ

ՄԱՅՐԱՄՈՒՏ ԱՐԵՒԷ

Բոցերուն մէջ բազմած փիւնիկ մը հանդարտ,
Թարմ շիւղերու ածիւնն հոսի զերդ կրակ .
Բայց Խուչունն է հալեր մաշեր լոկ կմախք մ'
Կը նշմարուի հոյլ բոցերուն մէջ պարարտ:
Ա՛, ի՛նչ սիրուն, լերան Խուչունն լուսազարդ,
Ածիւններու վառ յոյսին մէջ երերուն,
Դեռ հարսնցու աղջկայ մը պէս աղւոր,
Շիկնած կ'երթայ, սոսկ սարսուռով երազուն,
Յոյսէն Թովուած, յոյզով լեցուն վերաւոր:

Ատաբազար

ԿԱՐԷՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐՓԱՐԱՆԻ ՄԷՋ

34.—Ի՛նչ որ կրնաս այսօր բնել վաղուան մի՛ թողուր

— Շատ ժամանակ ունիմ կ'ըսէ Սիրանոյշ, Այս գիշեր պառկելէ առաջ դասս կը սերտեմ: Այսօր հինգշաբթի է, կ'ուզեմ զբօսնուլ:»

— Բայց, ըսաւ մայրը, եթէ հօրեղբորդ աղջիկը գայ այս երեկոյ ինչպէս խոստացած էր:

— Լաւ, այն ատեն վաղն առտու կը սովորիմ, ըսաւ Սիրանոյշ:

Ստուգիւ երեկոյին հօրեղբոր աղջիկն եկաւ: Սիրանոյշ դասը չսորվեցաւ նախընթաց օրուան խաղալուն պատճառով: Յաջորդ օրը ուշ արթնցաւ, հազիւ ժամանակ ունեցաւ շտապով հագուելու եւ դպրոց վաղելու առանց դասը սերտելու: Կրնա՞ք երեւակայել թէ ինչ պատահեցաւ: Սիրանոյշ յանդիմանութիւն լսեց եւ պատժուեցաւ:

Շատ անգամ փոքրիկ աղջիկներ Սիրանոյշին պէս կ'ընեն իրենց պակասութիւնները ուղղելու համար. «դեռ շատ ժամանակ ունիմ, երբ մեծնամ, ինքզինքս կ'ուղղեմ»: Կը մեծնան, կը ծերանան՝ չեն ուղղուիր իրենց ամբողջ կեանքին մէջ, կը մնան խենթ ու խելառ, ծոյլ, ստախօս եւ շատախօս:

Պակասութիւն մը կը նմանի զգեստի փոքր պատռուածքի, եթէ վաղուան սպասեն պատռածը կարկտելու համար, կը մեծնայ ան եւ չկարկտուիր: Եթէ պակասութիւնները ուղղելու համար միշտ վերջին սպասեն, այն ատեն պակասութիւնը մոլորեան կը դառնայ:

35.—Ձգուեանանք բարկութենէ

Օր մը, Սաթենիկ խիստ բարկութեան վայրկենի մը մէջ գետին նետեց ճենապակիէ աման մը: Ուրիշ անգամ, գուլպայ հիւսելէն նեղացած, շիւղերը քաշեց, բուրդը կտրեց եւ գործը քակեց: Ուրիշ օր մ'ալ տունը ձեր ծառայի մը հայհոյեց. որ իրեն դիտողութիւն մը ըրած էր շատ իրաւամբ:

Ահաւասիկ Սաթենիկ շատ յառաջ է գացեր. բարկութիւնն անցնելէն ետք, այլեւս չունէր այն ճենապակիէ ամանը, գորս շատ կը սիրէր. գուլպան կրկին սկսելու էր, վշտացուցած էր այն բարի ծառան, զոր շատ կը սիրէր:

Ի՛նչ անմիջ եւ չար խորհրդատու է բարկութիւնը: Երբեք լաւ բան մը չէ արտադրած, այլ ընդհակառակը: Բարկութեամբ մեր բոլոր արժանապատուութիւնը եւ խոհեմութիւնը կը կորսնցնենք. այնպիսի գործեր կ'ընենք, որու վրայ խորապէս կը ցաւինք. մենք մեզի անիրաւութիւն կ'ընենք եւ երբեմն ալ մեր շուրջը գտնուողներուն:

Զգուշանանք բարկութենէ: Երբ կ'զգանք թէ պիտի բարկանանք, մտքերնիս ուրիշ կողմ դարձնենք, ջանանք մոռնալ բարկութեան առիթը:

Նախ դիմադրենք պզտիկ անհամբերութիւններուն, որ մեզի կը ցանկն դեպ ի սաստիկ բարկութիւն առանց մեր նշմարելուն:

36.— Ծածկամիտ չլինիմք

Վարդուհի մօրսէն հրաման կ'առնէ հաւաքել իր փոքր բարեկամուհիները ամբողջ օրն ի միասին անցնելու եւ քիչ մը բան ուտելու համար: Սիրանոյշ կ'ընդունի հրաւերը միւսներուն պէս. բայց ան չփոթած կերպարանք մը ունէր, զոր Վարդուհին չնշմարեց: Ամբողջ շաբաթը տղաք կը խօսակցէին համախմբուած ժամանակ ունենալիք հաճոյքներուն վրայ, միայն Սիրանոյշ բան մը չէր ըսեր:

Համախմբումի օրը հասած էր, Վարդուհին զուր տեղը Սիրանոյշին կ'սպասէր. նա չէր գար: Յետոյ իմացան, որ ուրիշ հրաւեր մ'ընդունած էր, որն իրեն աւելի հաճելի էր:


Սիրանոյշ ծածկամիտ էր:

Ծածկամիտ տղաքը ապագայ ստախոսներ եւ կեղծաւորներ են: Ինչո՞ւ համար պարզապէս անկեղծութեամբ չըսել ինչ որ ընել կ'ուզեն: Ինչ մեծ փնտա կար Սիրանոյշին համար մէկ հրաւերը միւսէն նախամեծար սեպելուն մէջ: Ինչո՞ւ համար պահել, կեղծել:

ՏԻԿԻՆ Փ. ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ

Թաղէս փիլիսոփային հարցուցեր են թէ աշխարհիս վրայ ամէնէն դժուար եւ գիւրին բանն ի՞նչ է:

— Այս երկուքն է, պատասխաններ է. ինքզինքը ճանչնալ, և ուրիշին խրատ տալ:



ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Ա. Գրական մրցումին մեջ առաջին հանգիսացող գրութիւնը կը հրատարակենք, ՔՆՆԻՅԻՆ կողմէ եղած դիտողութիւնով միասին

ԱՆՏԱՌ

1.—Միշտ սիրած եմ անտառը: Ձեռ գիտէր անոր համար որ՝ մանկունակ նայուածքներս սկիզբէն ի վեր վարժուեցան պուրակներու այն խորհրդաւոր հեռանկարներուն՝ որոնք ծննդավայրիս հորիզոնը կը դրասանգեն: Եւ իրա՛ւ, առաջին ականարկներովս, մանուշագոյն, մշուշապատ լեռներուն գոգը սաղմնաւորող այդ երազային գաղտնիքները խուզարկած եմ, երբ փոքր ի շատէ խելահաս պճրիկի ձգտումներս՝ ա՛լ նեղ կը գտնէին տունին չորս պատերը, շատ շատ՝ պարտէզին մտերիմ ծառերն ու ծաղիկը, որոնք նորութենէ ինկած էին ինծի համար: Ու թոմպուլիկ թեւիկներովս մայրիկիս վիզը շրջանակած, նորօրինակ հարցումներու շարք մը կը սկսէի այս անգամ, բայց ո՛չ թէ ձիւնին ու անձրեւին սիրունիկ բացատրութիւնները, մինիսիկ պատմութիւնները լսելու համար, որոնց ատենին քանիցս ունկնդրած էի արդէն, ո՛չ ալ հարցասիրելու՝ տան, դպրոցի ու դուրսի բոլոր սովորական տեսածներէս սկսելով մինչեւ բնութեան բազմաթիւ երեւոյթները,—փայլակ, որոտում, ծիածան և այլն—որոնք ճնճղուկին աչուկին չափ գաղտնիք չ'ունէին ինծի համար, մայրիկիս անձանցիկ պատասխաններուն շնորհիւ: Հիմա, հեռունե՛րը կ'ուզէի ճանչնալ, քանի որ նայուածքս նո՛ր թեւ առած ծիծեռնիկի մը սլացքովը՝ միշտ դէպ ի նորը, դէպ ի անծանօթը կը ճախրէր: Կրնաք գիտնալ, ուրեմն, զգացած հրճուանքիս չափը, երբ բարի մայրիկս՝ բոլոր հարցումներուս մանրամասնօրէն գոհացում տալէ յետոյ, անգամ մըն ալ խոստացաւ կիրականօրեայ պտոյտով մը մօտէն ցուցնել ինծի ա՛յն վայրերը, որոնք հեռաւորութեան հրապոյրովը քողքուած՝ անբնական ենթադրութիւններ կը ծնցնէին մանկական միտքիս մէջ:

Գացինք օր մըն ալ, խումբ մ'երկսեռ դրացիներու հետ: Գորուն էր եւ ամէնէն յարմար ժամանակը՝ պտոյտի: Հազիւ մէկ ժամէն հասանք անտառը. բայց, ի՛նչ զարմանք, ամէնափոքր յոգնութիւն մ'իսկ չէի զգար ա՛յն պահուն երբ ոտք կը դնէի բնութեան այդ ճոխ թատերավայրի սեմին: Հետաքրքրութիւնը եւ նորանշան երեւոյթներու այդ առաջին հանդիպումը, ամէն անհանգստութիւն մոռցուցած էին:

Ո՛հ, ո՛րքան պճըլիկ, ո՛րքան նեղկուկ է եղեր մեր պարտեզն՝ իր թզուկ թուփերով ու մանրիկ բոյսերով: Ձեռ կրնար բաղդատել զանոնք անտառին եւ իր տիտանեան թեղօջներուն հետ: Նայուածքով չեա կրնար չափել անտառին ընդարձակութիւնը, որ լեռներու, բլուրներու գագաթէն սկսելով՝ ձորերու գոգը կ'իջնէ, հովիտներու եզերքը կը պճնազարդէ ու կը շարունակուի այսպէս, մութ կանաչի մաղմաղ վրձնումով մը հեռաւոր տեսարաններ ստեղծելով: Հոս՝ մինակ ճնճղուկներուն ճլուրլուքը չէ՛ որ կը լսուի, անտառին ամբողջ ծառերն ալ կ'երգեն, հովը իր հսկայ հո՛ւ հո՛ւն կը հեւայ՝ յաղթապանծ կաղնիներու ականջն ի վար, մինչ սոխակներն ալ, բնութեան այդ աննման սիրերգիչները, անտառին բոլոր անտես վայրերն իրենց թաքստոց ընտրած, հիանալի դայլայլիկներու հոգեցունց դաշնակութեամբ կը կենդանացնեն պէսպիսուն պուրակները:

Ձենէ անոնք որ առիթ ունեցած են անտառային պտոյտներով բոլոր ասոնց ծանօթանալու, կրնան գիտնալ թէ ի՞նչ աղուոր տպաւորութիւններով վերջացուցինք պտոյտնիս:

2.—Կարելի՞ էր ենթադրել, սակայն, թէ անտառները բնութեան անօգուտ զարդարանքներն են միայն: Պչրամոլ մարդիկ, ո՛րքան պէտք ունին օրինակ առնելու՝ իմաստուն բնութենէն: Այդ անսահման չքեղութիւնը, մեծատարած տեսարանները՝ սոսկ դիտողները դիւթելու, անոնց քմահաճոյքը շոյելու համար սարքուած չեն: Արարչութիւնը չէ՛ ստեղծած նոյն իսկ աննշան միջատ մը որ իր օգուտը չունենայ: Զօսեցնող պերճանքը, որով կը հմայուինք, դեռ փոքր բան մըն է, բաղդատմամբ բազմապիսի այն օգուտներուն որոնք ստեղծագործութեան ծրագրին բուն հիմը կը կազմեն: Անտառներն ալ, ուրեմն, ունին իրենց օգուտները, ու մենք վարժուելու ենք անոնցմով ալ հետաքրքրուելու, արժանաւոր սքանչացումով մը վերաբերուելու համար՝ բնութեան բազմաթիւ հրաշալիքներուն, որոնք միշտ նո՛ր բան մը կը պահեն հետաքննին դիտողին:

Տուներու շինութեան ու կահաւորման գործածուող ատաղձներու յարաճուն շտեմարաններն են անտառները: Ձեր դպրոցական գրասեղաններն, օրինակի համար, որոնք գործածումով կը մաշին, կը հիննան հիմա, երբեմն աճող եւ ուռճացող ծառեր էին՝ անտառին խորը. ու, հետեւաբար, դալարագեղ մայրիկներն ու կաղնիներն ալ, այսօր զարդեր՝ անտառին մէջ, վաղը պիտի բերուին՝ իրենց կարգին՝ լրացնելու մեր պէտքերը: Մեր վառելափայտն ալ անտառէն կուգայ, ու նոյն իսկ հանքածուխի այն հսկայ կոյտերը, որոնք ամէն օր, աշխարհիս ամէն կողմերը կը

սպառնի, ուրիշ բան չեն, եթէ ոչ՝ դարաւոր անտառներու բուսականութեան քարացած մնացորդները կամ ձեւափոխումները:

Անտառները կը սատարեն՝ մանաւանդ՝ օդի մաքրութեան. չըջակայ բնակութիւնները կը պատսպարեն կլիմայի յանկարծակի փոփոխումներէն, եղանակներուն խստութիւնը կը բարեխառնեն, ու մասնաւորապէս կ'արգելեն կարգ մը հիւանդութեանց փոխանցումը, ճահճային, խոնաւ ու տենդաբոյր միջավայրերու թունաւոր արտաշնչումները ծծելով ու չէզոքացնելով: Անտառաշատ գաւառներն ընդհանրապէս բարեխառն ու գեղեցիկ կլիմայ կ'ունենան. մինչդեռ միեւնոյն աստիճաններուն տակ գտնուող՝ անտառազուրկ տեղերն ամէնէն աւելի ենթակայ են եղանակաց տարապայման խստութիւններուն ու համաճարակ հիւանդութեանց աղէտներուն: Ծահճային երկիրներու մէջ մանաւանդ՝ անտառներու գոյութիւնը ճշմարիտ օրհնութիւն մը կրնայ համարուիլ. եւ ասո՛ր համար է որ, գիտական օրէնքներու համաձայն, այդպիսի տեղերու տարափոխիկ տեսիլներն անհետացնելու ամէնէն կտրուկ միջոցը համարուած է՝ անտառներ տնկելով ցամքեցնել ախտափարակ ճահիճները:

Մոռնալու չէ՝ նաեւ անտառներու որսորդութեան արդիւնքները, որով ձեռք կը բերուին բազմատեսակ երէներ, մուշտակաւոր կենդանիներէ ոմանք եւ թռչուններ ալ:

3.—Լեռնային անտառները, այս բոլորէն զատ, ինքնայատուկ օգուտներ ալ ունին: Անոնց շնորհիւ կը հաւաքուի անձրեւի ջուրը, որ պարբերաբար լեռներու կուրծքին մէջ երակաւորուելով, վարը դաշտերուն վրայ կը բաշխուի. աղբիւրներու յորհառատ ցայտքեր ցրցքնած չորս դին: Ու դարձեալ, այդ միեւնոյն անտառներն են որոնք, ձմեռ ատեն, ձիւնի սարսափելի հիւսերուն դէմ պատնէշ կը կանգնին, ցանցնելով զանոնք եւ արգելելով անոնց գահավիժումը, որ լերկ լեռներու գագաթէն աւերք ու մահ կը սփռէ շատ անգամ ստորոտի բնակչութեանց վրայ: Այս մասնաւոր ու թանկագին նպաստումներուն հետ՝ հաշուեցէ՛ք նաեւ թէ՛ լեռներու անտառներն ալ, միւսներուն նման, մեզի կուտան վառելափայտ եւ ստաղձ, կը չափաւորեն յանկարծական փոթորիկներու բուռն թափը, ամրան տօթը կը բարեխառնեն եւ աւաջքը կ'առնեն այլազան համաճարակներու տարափոխումին:

4.—Մարդկային սահմանափակ միտքը, միշտ յարգանքով ծընրադրած է խորախորհուրդ բնութեան հիանալի գաղտնիքներուն առջեւ: Ի հնումն, մանաւանդ, երբ զարգացման մակարդակը դեռ շատ նախնական աստիճանի մը վրայ կը գտնուէր, նախապաշարումները խիտ ցունցով մը պարուրած էին ժողովուրդի բո-

լոր դասակարգերն՝ ընդհանրապէս : Ռամիկը, չի կրնալով գիտական ճշգրիտ մեկնութիւններով բացատրել բնական բիւրաւոր երեւոյթները, նիւթին հանդէպ պաշտելութեան գաղափարը յղացած էր, անոր համար որ տարրերուն թաքուն զօրութեանը կը պարտէր կենսական պայմաններու գոհացումը : Ասոր հետեւանքներն են Արեւապաշտութիւնը, Զրապաշտութիւնը, Փարապաշտութիւնը, Ծառապաշտութիւնը, իրենց բազմաթիւ տեսակներով, որոնց մէջ մասնաւոր տեղ մը կը գրաւեն կարգ մը կենդանիներ, բոյսեր եւ իրեր : Ուստի, անտառին վեհաշուք տպաւորութիւնը, ցորեկ ատեն պարզած ակնագրաւ տեսնարաններով ու գիշերուան խորհրդաւոր սօսափիւններով, որոնք արդի՝ մարդուն համար՝ անձնական խառնաձեւերն համեմատ՝ գիտական նորանոր խուզարկութիւններ կամ բանաստեղծական խոհեր կը ներշնչէ՝ հինին թելադրած էր պաշտումի գերագոյն գաղափարը, որ հաւատքի հետաքրքրական այլազանութիւններ ճիւղաւորած է տարբեր միջավայրի համայնքներուն մէջ տարեկան տօներու եւ արարողութիւններու գործադրութիւնը հրիտակելով սերունդէ սերունդ : Այս կարգէն էր անցաւի մը պաշտամունքը, որուն ի հնումն հաւատք ընծայող ժողովուրդը, տարուէ տարի մասնաւոր անտառ մը կը հաւաքուէր, ռամկական հանդէսներ ու խրախճառքներ սարքելով : Ի յարգանս անտառներու շահապետին : Այս տեսակ աւանդութիւններ զեռ բոլորովին անհետացած չեն կրնար համարուիլ, գէթ քանի մը միջավայրերու համար, ուր աւանդապահ մամիկներու եւ պապիկներու սերունդը հին հաւատքի քուրմերը կը մնան, կան անտառներ ալ նոյն խակ, որոնց ծառերէն ճիւղ մը բրցկել մեղք կը համարուի, ուր ուխտի կ'երթան ամառք, տարուան մէջ որոշեալ օրեր, եւ իրենց հագուստներէն ծուէններ փաթտելով թուփերուն ու ոստերուն՝ ֆիզիքական ամէն ցաւերու դէմ ապահովուած կը զգան ինքզինքնին :

Մարդկային մտքի նախնական փուլերն են այդ բոլորը, որոնք այլեւս գիտութեան յարաճուն յառաջդիմութեամբ կը սրբագործուին հետզհետէ : Ու դուք, պճըլի՛կ բարեկամներս, հիմա չէ՞ք զարմանար, երբ տեսնէք դպրոցէ եւ ուսումէ զուրկ, նախապաշարեալ տղայ մը որ գիշերուան մութէն կը վախնայ, մտացածին դեւեր, աներեւոյթ ոգիներ երեւակայելով ա՛յն վայրերուն մէջ, ուր ցորեկը՝ համարձակօրէն պիտի պտտէր : Միայն թէ՛ այսպիսի պարագաներու մէջ՝ աւելի աղէկ կ'ընէք, եթէ փոխանակ ծաղրանքով վիրաւորելու ասանկներուն սիրտը, լրջօրէն ու փափկօրէն բացատրէք իրենց բոլոր ա՛յն բաները, զորս ձեր ուսուցիչներէն կ'ուսանիք :

Վստահ եմ թէ՛ համակարծիք պիտի ըլլաք ինծի, երբ ըսեմ որ անտառը մեր վրայ չի՛ ներգործէր այն անբնական ազդեցութիւնը՝ որ հիներուն պաշտամունքի ջիղն էր, երբեմն:

Անտառ մը, իր բովանդակ չքեղանքներով ու մեծավայելուչ տեսարաններով, իր վիթխարի ծառերով ու բիւրաւոր երգիչներով, Արարչին մէկ հիանալի ձեռակերտն է սոսկ՝ մեզի համար: Ու մեր միտքը կը սաւառնի ցիւրքէն շատ աւելի վերերը, շատ աւելի բարձրերը, դաւանելով անհուն կարողութիւնն ամենաինամ էութեան մը, որ բնութեան բոլոր կարգ ու սարքերուն մէջ օգտակարը զուգորդած է հաճելիին: — Ապացոյց մեզի՝ անտառները, բնութեան սքանչելիքներէն իբրեւ նմոյշ:

Ո՛չ նուազ հետաքրքրական ու չափեկան է անտառներու բուսաբերութիւնը: Անտառային ծառերէն կը ստացուին կաղինը, գլխորը, փալուտը, իսկ տորոնը՝ որ ուղան կաւմիրի գիւտէն առաջ՝ իբրեւ ներկեղէն կը գործածուէր դարձեալ վայրի բոյսի մը արմատն է: Սակայն ամենէն աւելի ուշագրաւն է գազպէնը (գուտրէթ հէլվասը) զոր հիմա քանի մը տողերով ձեզի պիտի ծանօթացնեմ, որովհետեւ ամէն միջավայրի յատուկ չէ: Ասիկա մեզրի աեղ գործածուող քաղցրահամ նիւթ մըն է որ անտառային ծառոց տերեւներուն վրայ կ'իջնէ ամառը Յունիսէն Օգոստոսի վերջերը: Ծառերու գազպէնազօծ տերեւները կը լուան, ջուրը կ'եփեն ու կը թանձրացնեն, հեղուկ գազպէն պատրաստելու համար, կամ զանոնք կը փշրեն ու կ'աճռեն իրեւ շոր-գազպէն, Գազպէնը, ամէն տեղ, ամէն առարկայի վրայ կը տեղայ. բայց որովհետեւ բնակութեանց մօտ եղող ծառերը միշտ չփման ենթակայ են և հոգն ու զանազան առարկաներն ալ ծծող՝ գազպէնի գլխաւոր ընդունարան համարուած են անտառները: Բայց մանաւանդ քարերու և ժայռերու վրայ կուտակուած գազպէնը՝ շատ մաքուր և պատուական կ'ըլլայ: Գազպէնի բաղադրութիւնը դեռ քննելի է: Վերջեքս վիճաբանութիւն մը յուզուեցաւ քանի մը թերթերու մէջ, այդ մասին: Յայտնուած կարծիքները թեր ու դէմ էին. մէկը manneին նմանցուց գազպէնը, ուրիշ մը քարաքօն է ըսաւ: Տեսնենք թէ՛ մեր ձեռնահասներն ի՞նչ կարծիք պիտի յայտնեն գազպէնի մասին: որ հաւանաբար միջնորոտային չափեկան երեւոյթի մը լուծումին պիտի յանգի: Իսկ անոնց որոնք գիտական օրէնքներու անտեղեակ լինելով՝ գազպէնը խէժերու, քարաքօսներու և բուսական արտաթորումներու նմանցնելու չափ առաջ կը տանին իրենց սխալը՝ մատնանիչ կ'ընենք քարի վրայ իջնող գազպէնի պարագան, որ ինքնին բաւական է գիրենք կարկեցնելու: Յարմար առիթներով, այսպիսի նիւթերով պիտի դաշինք Հանրագիտակի մէջ:

6. — Ահաւասիկ անտառներն և իրենց ընծայած օգուտը, բուսական Աշխարհին ընդհանուր կարգուսարքին իբրեւ լրացուցիչ, ինչ որ համառօտիւ ստուերազօնցինք հոս, Անտառագիտական ստուար հատորներու նիւթ կը մատակարարէ: Սիրելի ընթերցողներ, վարժուեցէք գիտասէրի խուզարկու նայուածքներով դիտել ձեր շուրջ, ամէն կողմ. գիտցէք թէ՛ բնութիւնը միշտ նոր դասեր ունի հետաքրքիր ուսանողին համար:

Տիարպէթիր

ՍՐԱՊԼԻՈՆ

ԴԻՏՈՂ. — Լաւագոյնը: Նիւթը աղէկ ըմբռնուած: Լեզուի յստակութիւն, գունագեղութիւն: Գաղափարներու աղէկ դասաւորութիւն:

Փ Ո Ե Ն Ջ Յ Բ Ը

Գ. ՇԱՀԻՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Դեռ չողջունած երազներու ջիւշ առնուն՝
Հովեն փչուած մոմի մը պէս շիջար դուն:
Տերեւին հետ հովերն բզեզ ալ քարին
Միացրենէլ մահուան անեղ օրջպարին:

Յիշատակի ծաղիկներու փունջեր քարմ
Քու շիրիմիդ վրայ սրփուել կ'ուղարկեմ.
Փունջեր՝ ցօղուած արցունքներուս շրթերէն
Զոր հեռաւոր քարեկամեղ կը բերեն:

Մ. ՄԵՆԱՏՈՒԲԱՆ

ՊԶՏԻՆ ԺԱԳԸ

Զմեռ էր. մռայլ ու ամպամած երկինքէն ձիւնը կը տեղար անընդհատ. հիսիսային քամին կուլար ծառերու մերկ ու դողացող ճիւղերուն մէջ. լճակը սառած էր և խեղճ թռչնիկներն անօթի էին:
Հայր Պետրոսի, ճամբուն վրայ մեռած գտնուած օրէն ի վեր, դժբաղդութիւնը սկսած էր բոյն դնել Մարկրիտի խրճիթին մէջ՝ իր հետ բերելով թշուառութիւնը:

Այրին պառկած էր այտերը կարմիր, չրթունքները դժգոյն ու աչքերը կիսաբաց: Փոքրիկ ժագ՝ իր օրդին, տասը տարեկան կ'ըլլար: Ս. Մնունդի տօնին առտուն տղան կանուխ շարթնցաւ:

— Հանգիստ քնացա՞ր, մայրի՛կ:

— Այո՛, սիրունիկս, շատ հանգիստ, շատ լաւ կ'զգամ ինքզինքս, ժա՛գ, միայն քիչ մը կը մսխմ, կրակարանին մէջ քիչ մը կրակ ըլէ :

Ժագ խրճիթին բոլոր անկիւններ խուզարկեց :

— Մայրի՛կ, բնաւ փայտ չիկայ :

Մարկոսիտ աչքերը երկինք յառեց « Ո՛հ, ինչպէ՞ս ընենք » եւ ժպտիլ ջանալով :

— Ինձ կը թուի թէ կարծածէս աւելի քիչ կը մսխմ :



Ժագ մուճակներն հագաւ գլխարկը քաշեց մինչեւ ականջները եւ ըստ իր մօրը :

— Անտառը կերթամ չոր փայտ բերելու, լայց շուտ կը վերադառնամ :

— Բայց այսօր Ծնունդ է, գաւախ :

— Բարին Աստուած ինձի պիտի ներէ անշուշտ, մայրի՛կ, քանի որ քեզի համար է :

— Սիրունիկս, անտառը երթալն արգելուած է :

— Զիս մարդ չպիտի տեսնէ. չուտ պիտի վերադառնամ պատարագի երթալու համար:

Մարկրիտ կը վարանէր, բայց սաստիկ կը մտէր:

— Գնա՛, գաւակս, ըսաւ, Աստուած քեզ պիտի օրհնէ, որովհետեւ մայրդ կը սիրես:

Պատիկ ժագ առաւ իր հատոցիկը, չուան մը իր բեռը կապելու. համբուրեց իր մայրը ու բացաւ դուռը մեկնելու համար: Հովի պաղ հոսանք մը պտուտիկեց սենեակին մէջ:

— Ո՛հ, ի՛նչ գէշ օդ, Աստուած իմ, մրմնջեց հիւանդը: Մտիկ ըրէ սիրունիկս. բաց արկղիկը, ուր գետեղած եմ դժբաղդ հօրդ հանդերձները, առ իւր վերարկուն, այն վերարկուն որով զինքն ինձ ներկայացուցին դժբաղդութեան օրը: Պլլուիւր անով ու ցուրտը քեզի չպիտի փնասէ:

Ժագ առաւ արկղին մէջէն ծալուած վերարկուն, որուն վրայ կար տոսախի օրհնուած ճիւղ մը:

Ասիկա բուրդէ լայն վերարկու մըն էր, որ տեղւոյն սովորութեան համեմատ սայլորդի կրկնոց կը կոչուէր:

Երբ տղան պիտի մեկնէր՝ Մարկրիտ յարեց:

— Ժագ, եթէ անցնիս Պարիկներու քառուղիէն, մի՛ մոռնար աղօթելու խաչին ոտքին տակ:

Ժագ անտառին ճամբան ձեռք առաւ: Զիւնը կը տեղար անընդհատ հիւսիսային քամիէն քշուելով. երբեմն կը կանգնէր ու մուճակներուն վրայի ձիւնը թոթուելու համար գետնին հարուածներ կուտար, չէր մտեր նա, միայն իր կրկնոցը ծանր կը թուէր իրեն. քաջասրտութեամբ կը քալէր:

Կ'երթար ան երբեմն մինչեւ ծունկերը ձիւնին մէջ թաղուելով, երբեմն իյնալով. բայց միշտ ժպտելով կը կանգնէր:

Անտառին մէջ գործի սկսաւ ժագ: Ա՛հ, որքան կ'աճապարէր մեր պզտիկ քաջասիրտը. հանած էր վրայէն իր կրկնոցը աւելի աղատ ըլլալու համար, սրունքները, բազուկներն ու ձեռքերը ձիւնէն թրջած եւ ցուրտէն ընդարմացած էին. մինչդեռ իր դէմքէն քրտինքը կը հոսէր: Այն ատեն երբ ուղղուելով տեսաւ հաւաքած ճիւղերուն դէզը, ինքզինքը բոլորովին երջանիկ զգաց երեւակայելով այն բոցը որով իր մայրը պիտի տաքնար:

Վերջապէս հաւաքեց այնքան որքան կրնար չալկել, յետոյ աւելցուց մէկ երկու ճիւղեր եւս, չինեց իր խուրձը, կրկնոցն առաւ ուսերուն վրայ ու շալկելով իր բեռը սկսաւ քալել դէպի գիւղ:

Իր փոքրիկ սրունքները կը դողային քիչ մը, ինչու որ իր բեռը ծանր էր ու ձիւնը թանձր. բայց իր մայրիկը կը մտէր. նա կը դողդէջար անշուշտ իրեն սպասելով եւ յանկարծ լսեց պատարագին զանգակին առաջին հարուածը... որքան կ'աճապարէր:

Հասաւ Պարիկներու քառուղին, հոն պատուանդանի բարձրը ձեռքերը խաչին դամուած, գլուխը փուշերով պսակուած, կողը, ծակուած Յիսուսը տարածեր էր իր բազուկները եւ կարծես աշխարհը չհոն ապաստանի կը հրաւիրէր. վիշտերէն խոշորացած աչքերը երկինք կը նայէին, մէկ կողմը տնկուած էին սիներ, որոց կարմիր հատիկները կը յիշեցնէին այն արիւնի կաթիլները որոնք հոսեցան Աստուածային ճակտէն:

Մարկրիտ մասնաւոր ջերմեռանդութիւն մ'ունէր Պարիկներու քառուղիի Յիսուսին. որովհետեւ իր ամուսնոյն դիակը բերող մարդիկը հոն կանգնած ու աղօթած էին անոր համար: Ահա թէ ինչո՞ւ համար պատուիրեր էր ժագին որ անկէ անցած ատեն աղօթել չմոռնայ:

Ժագ վար դըրաւ իր բեռը, գլխարկը հանեց, ծնրադրեց եւ սկսաւ արտասանել իր աղօթքը որ իր մայրը սորվեցուցած էր իրեն, քամին միայն կ'ընկերանար իր տխուր ու հանդիսաւոր ձայնին. նա կը դիտէր ձիւնով ծածկուած Յիսուսի դէմքը, կիսաբաց բերանը, վեր յառած աչքերը՝ անհուն վշտի երեւոյթ մը կուտային, երկու պղտիկ սառչոյցի կաթիլներ արցունքներու նման վար կը կախուէին իր արտեւանունքներէն:

Պզտիկ ժագ կը գթար եւ կ'ուզէր մխիթարել զայն սրուն կ'աղօթէր:



Երբ իր աղօթքն ավարտեց շալկեց իր բեռը ու հեռացաւ: Երայց վերջին անգամ մ'ալ դարձաւ դէպի Յիսուս որուն նայուածքներն կարծես իրեն կը հետեւէին, ճիշդ նոյն վայրկեանին սաստկաշունչ քամի մը փչեց ձիւները հրահրելով ու արձանը կարծես դողաց:

Ժագ կանգնեցաւ « Ո՛վ իմ խեղճուկ բարի Յիսուս, որքան կը մխի », մըմնջեց, ու ետ դարձաւ խաչին քով, ճիշդ հոն աւանց գիտնալու, ուր իր հայրը գետին դրեր էին աղօթելու համար: Հանեց իր կրկնոցը, մագլցելով ելաւ պատուանդանին վըրայ, եւ գօտիին դուրս ցլուած քէն օգտուելով կրցաւ հասնիլ Յիսուսի ուսերը, ու զանոնք իր կրկնոցով ծածկեց:

Վար իջաւ տղան ու ետ գնաց աւելի լաւ տեսնելու համար ու ըրածէն գոհ՝ ըսաւ « Գոնէ այլ եւս չպիտի մխի այնքան »:

Արտեւանունքներէն կախուած սառի գնդիկները կը հալէին մեղմօրէն ու այտերէն վար կը գլորէին իբր երախտագիտութեան արցունքներ արձանին դէմքին վրայ:

Ժագ սկսաւ իր ճամբան վազելով երթալ, Հիւսիսային քամին կը փչէր ետեւէն ու իր բամպակեղէն վերարկուէն ներս մարմնոյն կը թափանցէր, հասաւ բլուրին ստորոտը բոլորովին շնչասպառ, հեղեղներէ բացուած ճամբայի մը մօտը՝ որ ձիւնէն պաշտպանուած էր եղելիններու շարքէ մը, Նստաւ հոտ հանգչելու, բայց վայրկեան մը միայն. իր մօրը միանալէ առաջ « Պէտք չէ քնանալ » կ'ըսէր խեղճ տղան, բայց այնքան յոգնած էր որ քնացաւ :

Երբ արթնցաւ Ժագ՝ իր շուրջը նայելով շատ զարմացաւ. հեղեղատը, ձիւնը, անտառը, լեւը, գորշագոյն երկինքը, սառուցիչ քամին, իր ճիւղիկներու խուրձը, ամէնքը աներեւութացած էր. Ժագ իր աչքերը շփեց կարծելով թէ կ'երագէր :

Օդը բարեխառն էր ու տոգորուած ազնիւ անուշահոտութեամբ մը. կը լսէր նաեւ այնքան անուշ ներդաշնակութիւն մը որ իր սիրտը կը թովէր :

Ժագ կանգնեցաւ. Յիսուսի ուսերուն վրայ ձգած պատռուած կրկնոցին տեղ, ինքն հագած էր հիմա առանց կարի երկնագոյն վերարկու մը. նման Յիսուսի այն պատմութեանին, որուն վրայ վիճակ ձգեցին Հրէաները Գողգոթային վրայ :

Իր պզտիկ ձեռքերը որ ցուրտէն ուռած ու ճեղքուած էին, հիմա այնքան փափուկ ու ճերմակ էին որ կը նմանէին կարասներու թեւերուն ծայրին :

Ժագ զարմացած էր բայց երբէք չէր վախնար :

« Ո՞ր եմ արդեօք » հարցուց :

Ու ձայն մը այնքան աւելի մեղմ ու ներդաշնակ որքան սիւքին սուլումը՝ պատասխանեց. « Հօրս տանը մէջ, այն տան մէջ ուր կ'ուզան արդարները, բարի սրտերը ու բարեկամ հոգիները » :

Այն ատեն Ժագ տեսաւ իր առջեւ տնկուած Պարիկներու կառուղիին մեծ խաչելութիւնը, ծածկած կրկնոցն ուսերուն վրայ :

Յիսուս ըսաւ անոր. « Սիրելի տղայ. գթացիր Աստուծոյդ վրայ որ կը տառապէր. ինքզինքդ վերարկուէդ զրկեցիր անոր համար. դուն ասիկա բոլոր սրտիդ պարզութեանը մէջ, որովհետեւ բարի ես. ասոր համար էր որ իմ վերարկուս տուի քեզ. քու կիներդ փոխարէն, ինչու որ բոլոր առաքելութիւններուն մէջ առաջինը ու էն հազուագիտը գթութիւնն է. Այսուհետեւ դու միշտ Աստուծոյդ հիւրն ու բարեկամն ես » :

Ժագ քայլ մը առաւ դէպի այս շացուցիչ երեւոյթը իր պաղատող ձեռքերը տարածելով. « Խնջ կ'ուզես » ըսաւ ձայնը. տըզան մըմնջեց « Մայրս » :

Յիսուս յիշեց տղուն մայրը արցունքներով հեղձեալ ու նըւաղած իր խաչին ոտքը. « Ժագ, բաւ, աղաչանքդ լուեցաւ » :

Յանկարծ սպիտակ թեւերու ձայն մը լուեցաւ և ուրախութեան Ժպիտ մը փայլեցաւ Յիսուսի դէմքին վրայ :

Հեռուն հորիզոնին մէջ, կը նշմարուէր Մարկոսիտը հրեշտակներու թափորի մը մէջ : Իր դէմքը ո՛չ տգոյն էր ոչ նիհար. այլ գուարթ ու լուսափայլ. Հրեշտակները զայն դրին Յիսուսի առջեւ, ու երբ գլուխը վերցուց ան, երկու ստուերներ տեսաւ, երկու հոգիներ իր շուրջը ծնրադրած, մէկն էր պզտիկ Ժագը իր

գաւակը, և միւսը՝ Հայր Պետրոս՝ իր ամուսինը. երեքն ալ շփոթեցան միեւնոյն համբոյրին ու միեւնոյն երախտագիտական խանդին մէջ:

Աստուած զանոնք միացուցած էր յաւէտ իր երկինքին մէջ:

Հիւսէյնիկ

ՍՏՈՒԷՐ

ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ

ԹՈՒՂԹԷ՝ ՄԻԱՅՆ ԳՐԵԼՈ՞Ւ ԿԸ ԾԱՌԱՅԻ

Երբ թղթի գործածութիւնն սկսաւ ոչ ոք կը խորհէր ապագային մէջ անոր մատուցանելիք անհուն ու դիւրամատչելի ծառայութեանց վրայ, գուցէ կէս դար առաջ իսկ. սակայն այսօր կատարուած իրողութիւն մ'է թէ թուղթը մի միայն գրելու կամ գիրք կազմելու շծառայէր, հապա՜ ինչպէս փայտը և քարը, նրմանապէս եւ սա կը գործածուի, մարդոց շատ մը պիտոյքները գոհացնել ածան կերպով: Կը յուսայիք տեսնել պնակներ, թաղարներ, ծաղկանոցներ եւ այլ գործիներ, բոլորովին թղթէ շինուած: Թէեւ ի սկզբան շատ դժուարութեանց բաղխեցաւ մարդ, զի խմորը պնդանալով հեռոցհեռէ կարծրութիւն մը կ'զգենուր, որ ամենափոքր շարժման կամ հարուածի տակ իսկ փշուր փշուր կը լինէր, սակայն գիտութեան ձեռքէն պրծիլ փորձելն յիմարութիւն էր, տակաւ առ տակաւ կարծրութիւնը ջնջելու միջոցն իւր ամէկոտ քօղն պատուեց գիտուններու ձեռքին մէջ, այնպէս որ այսօր թղթէ գեղեցիկ տակառներու շինուիլն եւ ազնիւ ու դիմացկուն մատիտներու վաճառուիլը կը նշմարուի ամէն կողմը:

Ամերիկացիք եղած են առաջին անգամ թղթէ գարեջուրի տակառներ շինելու գաղտնիքը պարզող: Մեր ամենօրեայ գործածած թղթի ամենամեծ գաղտնիքներէն եւ յատկութիւններէն մին ալ տախտակ եւ գերան շինուիլն է որ եւ պատճառ եղած է խիստ ածան եւ դիւրամատոյց կերպիւ թղթէ տուներ շինելու: Այսօր Եւրոպայի զանազան քաղաքաց մէջ կը հանդիպինք սոյն նիւթով շինուած հաստատութեանց որոնք ուրիշ ո՛ր եւ է շինուածանիւթէ զանազանել գրեթէ անկարելի է: Թղթին մատուցած ամենամեծ օգուտներէն մին ալ խոնավութեան հետ ներհակ ընթանալն է և որ խիստ շահեկան է առողջարանական և բժշկական առումը, առիթէն օգտուելով ուրիշ զանազան մանր մունր պիտոյքներէ զատ, այժմ զարգացեալ քաղաքներու մէջ ձեռնարկած են թղթէ հիւանդանոցներ կառուցանել: Սոյն ձեռնարկն առողջապահական

անսակէտով եւս խիտ յարմար է, զի տարափոխիկ եւ այլ սոսկալի հիւանդութեանց մանրէներն ջնջելու համար միակ միջոցն ընտրած են ամբողջ հաստատութիւնն այրել, գոնէ 4—5 տարին մի անգամ, եւ ի հիմանց նորէն վերաշինել: Այս կանոնը քարաշէն կամ փայտաշէն մեծակերտ հիւանդանոցներու եւ տուններու վրայ փորձելն անմտութիւն է, որովհետեւ քսակներուն դժուարամատոյց պիտի լինէր եւ բնականաբար պիտի ունենար իւր բոլորովին յոռի կողմերն եւս. իսկ, ընդհակառակն, միւսը՝ թղթաշէնը թէ՛ քսակաց մատչելի է եւ թէ՛ ամէն կերպով դիւրաշէն եւ դիւրատար: Քիչ մը վերը յիշուած կանոնը կը յարմարի նա մանաւանդ զինուորական հիւանդանոցներու որոնք միշտ շարժական ու չըլուն լինելուն, հարկ կ'ըլլայ զանոնք տեղափոխել աստ անդ, որոնց մատուցած ծառայութիւններն ու ընձեռած օգուտներն անհաշուելի են. նամանաւանդ ի մասին տարափոխիկ հիւանդութեանց: Յայտնի է թէ անցեալ ժամանակաց մէջ թուղթերը եղէգով, մորթէ, կտաւէ, մետաքսէ բամպակէ կը շինուէին, եւ սովորական թերթերուն թղթերն ալ՝ քուրջերէ եւ կամ ուրիշ զանազան նիւթերէ, ինչպէս նաեւ գլխաւորաբար փայտէ, ուստի տարօրինակ չը պիտի թուի մեզ թղթէ գործինք, կարասիներ, խաղալիկներ եւ այլ իրեղեններ շինուելու իրողութիւնը, զի թղթէ կառուցուած տուններն ու հիւանդանոցները բնաւ չպիտի կարողանանք զանազանել միւս նմանօրինակ շինուածքներէ:

Թուղթին ունեցած փայտէն տարբերութիւնը սա է որ՝ խմոր վիճակի մէջ դրուելէն յետոյ, աստիճանաբար ճնշուելով հարթ մակերեւոյթներ եւ կամ ուղուած ձեւերը կրնայ տրուիլ անոր ամենայն դիւրութեամբ: Այլ եւս անտարակուսելի է որ մենք պիտի կարողանանք խիստ դիւրութեամբ եւ ածանութեամբ թղթէ շինել մեր ուզած բաները, նոյն իսկ նաւակներ ու նաւեր, որոնց սահիւր ջուրին վրայէն քիչ ատենէն մենք իսկ մեր աչքով տեսնելու բաղդին արժանանանք: Մի զարմանաք երբ ըսեմ թէ շոգեկառքերու անիւներն իսկ տեղի տուած են թուղթին, որու համար խելք ու ժամանակ վատնելը՝ ծիծաղելի բան մը կը նկատուէին գործարանատէրերը: Բայց հիմայ իրականութիւն կը գտնէ ծիծաղելի համարուած այդ գործը, եւ թուղթէ անիւներ կը թաւալին իրենց առանցքին վրայ՝ ամենածանր ճնշումներու իսկ դիմադրուելով:

Պէտլօի մէջ սկսած են շինել թուղթէ փուռեր ու լոգարաններ որոնք զարմանալի յաջողութիւն մը կը գտնեն:

Ժամանակակից տարօրինակ գիւտերէն մին ալ՝ մամուռէն թուղթ յառաջ բերելու զարմանալի յաջողութիւնն է. ինչպէս

Թուղթը նմանապէս և սա միայն գրուելու չծառայեր. կը գտնուէին 10 սաթիմէթը հաստութեամբ խաւաքարտեր որ համակ մամուռ են, և որոնցմով շէնքեր, անիւներ, խոհանոցի կարասիներ, գործիներ և խաղալիքներ կը շինեն: Այս առարկաները՝ իրենց դիւրամատչելիութեան ու թեթեւութեան պատճառաւ օրէ օր կը տարածուին և կ'ընդհանրանան ի մեծ դիւրութիւն աղքատ ու միջակ քսակներու:

Մ. ՊԱՊԱՅԷԿԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԸ

Դիսակի « Մտածութիւնք Տօնական Օրերու Հայ. Սբ. Եկեղեցւոյ » խիստ շահեկան ու օգտաշատ գրքոյկը, որ արժանի է ընթերցման մասնաւորաբար Մեծ Պահքի օրերուն, կը գտնուի բոլոր գրաւաճառներուն քով, Կեդրոնատեղին է Մէրճան, Եալտը խան, Թիւ 10, Առաքել էֆ. Գաբրիէլեանի գրասենեակը: Գին 5 դահեկան: Մէկ անգամէն 5 օրինակ գնողին մէկ հատ նըուէր կը տրուի: Հասոյթը կը վերաբերի ողբացեալ հեղինակին այրի տիկնոջ և իր որբերուն: Ո՞վ չպիտի սիրէ հատ մը գնել:

ԳԻՏԱԿԱՆ, ԶԲՕՈՒՆՔ


ԱԶԱՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Երբ նարինջ մը ուտէք, կեղեւին մէկ մասը՝ պտուղին ճիշդ մէջտեղէն կտրելով հանեցէք առանց պատռելու, այնպէս որ կէս կտրուած նարինջի կեղեւը՝ սկահակի (քեասէ) ձեւը կ'ունենայ: Ասով՝ տարբեր խառութիւն ունեցող քանի մը հեղուկներու միեւնոյն ամանին մէջ իրարու մակադրութեան օրէնքին վրայ փորձ մը պիտի հաստատենք:

Սագէ փետուրէ ակռայ-խաւներէքով մը՝ սոյն կեղեւին վրայ երկու ծակ բացէք, յետոյ դեղին կողմը վար դարցած դրէք գաւաթի մը մէջտեղը, կեղեւին տրամագիծը գաւաթինէն աւելի մեծ ըլլալով՝ վար չպիտի իյնայ: Մէջը լեցուցէք կարմիր գինի, որ երկու ծակերէն անցնելով՝ գաւաթին յատակը պիտի լեցուի. նախեցէք որ գինիին բարձրութիւնը նարինջի կեղեւէն քիչ մը վար ըլլայ: — Յետոյ գաւաթին մինչեւ բերանը ջուրով լեցուցէք: Անմիջապէս գինիի բարակ թել մը պիտի անցնի նարինջի կեղեւի ծակերուն մէջէն և բարձրանայ ջուրին երեսը, մինչդեռ ջուրի

երկրորդ թել մը պիտի իջնէ մինչեւ գաւաթին յատակը : Քանի մը վայրկեանէն փոխանակ ջուրը վրան եւ գինին տակը ըլլալու, երկու հեղուկները տեղերնին փոխեր եւ հակառակն է որ տեղի ունեցեր է :

Եթէ ուզէք կրնաք կեղեւին երկու ծայրերէն . ծայրերը բաց



սագի փետուրներ անցնել՝ մին դէպ ի վեր՝ իսկ միւսը դէպ ի վար դարձած . եւ որոնք իբր խողովակ պիտի ծառայեն :

Կրնաք նաև ջուրի եւ գինիի տեղ գործածել կաթ եւ ջուր, (առաջ ջուրը լեցնելով) . եւ կամ՝ ուրիշ երկու ո եւ է հեղուկ՝ որոնց խտութիւնը տարբեր ըլլայ :

Հանրագիտակի յաջորդ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ Վաճառականացի 24 երես , եւ պիտի պարունակէ նշանաւոր հայ վաճառականի մը լուսանկար պատկերը :

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Խմբագրութեան , Բաժանորդագրութեան եւ ո՛ր եւ է գործառնութեան առթիւ հարկ եղած դիմում, գրութիւն կամ նամակ պէտք է ուղղուին միմիայն

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵՍՆԻ

որ միակ վարիչն ու պատասխանատուն է թերթին :

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ—ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՏՊԱԳՐԻԶ—ՀՐԱՏԱՐԱԿԻԶ

ԱՐՄԲԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵՍՆԻ

Պապը Ալի ճատտէսի, Թիւ 33 , Իգտամ լրագրին դէմ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱՐԱԹԱԿԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Նոր տարին սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 20-24 էջէ բաղկացեալ, եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վանառականացի, 24 էջ:

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

ԱՐԵԿԱՆ ԳԻՆՆԷ

Պոլսոյ համար

30 շրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

Առաջնորդ վանառականացի 12 օրէր զաւ առնել ուզողը պէտք է վճարէ 12 շրուշ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Պանդամուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պաղպաղեան
Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան
Դօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւլէրեան
Եւթոկիա, Պաշիկ էֆ. Գ. Թաշճեան
Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
Թեֆրսաղ, Ասատուր էֆ. Արսէնեան
Խաբեբդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կեսարիա, Երուանդ էֆ. Երկաթեան
Կիւրին, Գրիգոր Մ. էֆ. Պանդամուր
Հալէպ, Մ. էֆ. Ամատեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշճեան
Մաւաւ, Արծ. Տ. Նէրսէս Քհ. Շահինեան
Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան
Պարսիզակ, Ստեփան էֆ. Մակարեան
Սամսօն, Յովհաննէս էֆ. Նիքարտեան
Սրվազ, Մանուկ էֆ. Պէլլէրեան
Սիւմ հանի քոյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Վեզիր քոքըլ » » »
Տիւրքիք, Լեւոն էֆ. Սրապեան
Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան

Քանի մը տեղերէ, ուր Գործակալ չունինք, կը հարցնեն թէ Հանրագիտակի բաժնեգինը և կամ մանր յանձնարարութիւններու փոխարժէքը ի՞նչպէս ղրկելու է:

— Ամէնէն պարզ միջոցն է Օսմ. նամակադրոյժ դնել նամակին մէջ եւ նամակն ալ ապահովագրել (քանիւս ընել): Նամակադրոյժ կրող նամակները ապահովագրելը անհրաժեշտ է, որովհետեւ մեր ձեռքը չհասած ժամանակ, երբէք պատասխանատու չենք:

Հատը 30 փարայ